

Միքելի Զոհրապ,

Նախ եւ առաջ կ'ուզէի Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ Միութեան Վարչութեան անունով եւ անձնապէս իմ կողմէ սրտագին շնորհաւորութիւններ յայտնել՝ քեզի ընծայուած այս պատիւին համար, որով դուն արժանաւորապէս կ'ըլլաս Մելգոնեանցիներուն մեծ ընտանիքին՝ 2011 թուականի «Տարուան Մարդ»ը:

Միքելի Մելգոնեանցիներ եւ բարեկամներ,

Ինձմէ խնդրուեցաւ որ այս հանդիսաւոր առիթով երկու խօսք ըսեմ Զոհրապին մասին եւ զինք ներկայացնեմ Ձեզի: Չեմ գիտեր, արդեօ՞ք պէտք կայ Զոհրապը ներկայացնելու: Քանի որ վստահ եմ՝ Զոհրապը չ'ճանչցող չկայ, գոնէ հոս, այս սրահին մէջ: Արդարեւ պիտի չ'վարանիմ նոյնիսկ աւելցնելու, որ Զոհրապը համաշխարհային ճանաչում ունեցող անձնաւորութիւն է: Իր մասին եւ իր գործունէութեան մասին տեղեակ են ո՛չ միայն Մելգոնեանցիներ այլ նաեւ Մելգոնեանցիներու բարեկամներ՝ Հայաստանէն մինչեւ Սփիւռքի հեռաւոր ավերը.... Թէ՛ բոլոր Մելգոնեանցիները կը ճանչնան Զոհրապը կարծեմ զարմանալի չէ: Բայց, զարմանալին ա՛յն է որ Զոհրապ ինք եւս, փոխադարձաբար, գիտէ, կը ճանչնայ բոլոր Մելգոնեանցիները, տարեց թէ կրտսեր, անուն մականունով, դէմքով,....

Ամենայն դէպս, որքան որ ալ գիտենք թէ ով է Զոհրապ Շամմասեանը եւ նոյնիսկ եթէ մօտէն յարաբերած եւ գործակցած ալ ենք իր հետ, կը խորհիմ թէ տեղին պիտի ըլլայ այս առթիւ իր մասին իմ հաւաքած կարգ մը կենսագրական տուեալներ Ձեզի հետ բաժնել:

Զոհրապ ծնած է Մուսա Տաղ: Մուսա Լեոցի է: Ուր թ տարեկան էր երբ իր ընտանիքին եւ շատ ու շատ այլ Մուսա Լեոցիներու հետ տեղահան կ'ըլլայ ու կը փոխադրուի Լիբանան ուր՝ Մուսա Լեոցիներ կը հիմնեն Այնճար Հայաւանը: Զոհրապ 1945-ին կ'ընդունուի Մելգոնեան եւ կ'աւարտէ 1951-ին: Ապա իր ուսումը կը շարունակէ Պէրյորի Middle East College ի մէջ: Զոհրապ արհեստով հաշուապահ եղած է: Ամերիկա գաղթած է 1965-ին եւ մօտ քսան տարի աշխատած է Ամերիկեան Bechtel յայտնի ընկերութեան հետ: 1986-ին, Սանթա Անա քաղաքին մէջ, Զոհրապ իր անձնական հաշուապահական գրասենեակը կը բանայ եւ կը բանեցնէ մինչեւ 2006 թուականը, որմէ ետք՝ հանգստեան կը կոչուի. սակայն չի՛ դադարեցնել իր գործունէութիւնը, եւ իր ժամանակը կը տրամադրէ օգտակար ըլլալու իր շրջապատին, իր համայնքին, այլ եւ մանաւանդ Մելգոնեան Կրթական Հաստատութեան հետ կապուած հարցերուն: Իր մօտ ակնյայտ է բացառիկ տաղանդ մը՝ կազմակերպելու, ղեկավարելու, հանգանակելու, խրախուսելու, ոգեւորելու եւ

գործի լծելու իր շուրջինները: Կը սիրէ մարդոց մէջ մտնել, կապ հաստատել, հաղորդակցիլ, յարաբերիլ: Անխոնջ աշխատող է եւ ծառայասէր, բայց մանաւանդ յամառ պայքարող՝ իր փայփայած երազը իրականացնելու վճռականութեամբ:

Հոս պիտի ուզէի տարիներու ընթացքին Չոհրապի իրագործած մի քանի ձեռքբերումներուն մասին անդրադառնալ:

1967-1976 տարիներուն Չոհրապ ատենապետ եղած է Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգաբարձութեան: Իր հաստատ եւ հետեւողական աշխատանքին եւ կազմակերպած յաջող դրամահաւաքին իբրեւ արդիւնք՝ կ'իրականանայ Ամերիկայի առաջին Հայ դպրոցը՝ Ֆերրահեան Երկրորդական Վարժարանը: Կը քառապատկուի Եկեղեցիին անդամակցութիւնը: Լրիւ կը վճարուի Եկեղեցիին պարտամուրհակը: Կը գնուին Եկեղեցիին յարակից հինգ էջքըր հողամասեր եւ կը կառուցուին Ֆերրահեան Դպրոցի շէնքերը, խաղավայրեր, եւայլն

1975-1987 տարիներուն Չոհրապ անդամ կ'ընտրուի Օրենճ Քաունտիի Քառասուն Մանկանց Հայ Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան: Հայ համայնքը Սանթա Անա ի մէջ եկեղեցի եւ դպրոց կառուցելու ծրագիրներ կը մշակէր: Չոհրապ հոս եւս գործի կը լծուի: Իր նախաձեռնութեամբ կը կազմակերպուի ճաշկերոյթ դրամահաւաք: Աննախընթաց յաջողութեամբ կը հանգանակուի 800 հազար դոլար եւ երկու տարիէն կ'աւարտին եկեղեցիին, դպրոցին եւ սրահին շինարարական աշխատանքները: Շնորհիւ իր ձեռներեցութեան, ձեռնհասութեան, եւ համակրելի վարուելակերպին՝ Չոհրապ հոս եւս կը յայտնուի որպէս Օրենճ Քաունտիի եկեղեցիին եւ դպրոցին հիմնադիր սիւներէն մին:

1996-ին, Լոս Անճելըսի մէջ, 550 Մելգոնեանցիներու մասնակցութեամբ տեղի ունեցան Մելգոնեան Կրթական Հաստատութեան 70-ամեակի հանդիսութիւններ: Չոհրապի մտա-յղացումն ու ծրագրումն էր որ յաջողցուց համաշխարհային Մելգոնեանցիներու վերահանդիպում հաւաքը Հիլթըն Հօթելի մէջ մէկ շաբաթ տեւողութեամբ: Լաւ ծրագրուած եւ լաւ կազմակերպուած հանդիսութիւններ էին: Այս միջոցին էր որ Չոհրապի նախաձեռնութեամբ հիմը դրուեցաւ Մելգոնեան Մանուց Միութեան Անձեռնմխելի Հիմնադրամին եւ այդ առթիւ հանգանակուեցաւ աւելի քան 110 հազար դոլար: Հիմնադրամին նպատակը ծանօթ է բոլորին. Օգնել Մելգոնեանի կարիքաւոր ուսանողներու կրթաթօշակի ծախսերուն: Առ ի գնահատանք իր տարած այս արդիւնաւետ աշխատանքին՝ Չոհրապ պարգեւատրուեցաւ ՀԲԸՄիութեան ոսկեայ շքանշանով:

Չոհրապի երկար տարիներու գործունեութիւնն ու ծառայասիրութիւնը ազգային, հանրային, կրթական, մշակութային քաղաքական եւ այլ բնագաւառներու մէջ՝ արդարօրէն գնահատուած եւ արժեւորուած է: Այս կը վկայեն իրեն ընծայուած բազում գնահատագիրներ, շքանշաններ, մեդալներ, մրցանակներ, պարգեւներ, եւ այլն...: Անոնցմէ մի քանին կ'ուզէի հոս յիշել.

1964-ին Պէյրութ, Free Mason-ներու ԱՆԻ օթյակին քարտուղարութիւնը վարած ըլլալուն համար կը գնահատուի ոսկիայ մեդալով:

ՀԲԸՄ-ի կողմէ կը պարգեւատրուի 25 տարիներու իր կամաւոր ծառայութեան համար:

1968-ին մասնաւոր Գնահատագիր՝ Լոս Անճելըսի Համազգային Մշակութային Միութեան կողմէ:

1996-ին Գնահատանքի Ոսկիայ Մեդալ՝ ՀԲԸՄի Մելգոնեան Սանուցի կողմէ:

1992 եւ 1993 Outstanding Achievement Award from the First National Leaders, Orange County. Եւ այլն...

Անցեալ տարի, Օրէնճ Քաունթիի մէջ, Մասոնական կազմակերպութիւնը մեծ շուքով նշեց Չոհրապի յիսուն ամեայ ծառայութիւնը՝ Մասոնական շարքերէն ներս:

2011-ը նշանակալից տարեթիւ մըն է Չոհրապին համար:

Յունուար ամսուն՝ Չոհրապին ծննդեան տարեդարձն էր:

Չոհրապին երկու սիրասուն գաւակները, Մայքը եւ Սիլվան, որոնք, ուրախ եմ յայտնելու, այսօր հոս ներկայ են, իրենց հօր տարեդարձին առիթով, անակընկալ հանդիսութիւն մը սարգած էին Օրէնճ Քաունթիի Արարատ ճաշարանին մէջ, ուր հրաւիրեալներու հոծ բազմութեամբ, ուրախ ու ջերմ մթնոլորտի մէջ տօնուեցաւ Չոհրապի ութսունամեակը:

2011-ը Չոհրապին եւ Անահիտին ամուսնութեան յիսուն ամեակն է: Այս բարեբաստիկ առիթով նաեւ պիտի ուզէի մեր բոլորին կողմէ բարի մաղթանքներով շնորհաւորել Չոհրապի եւ Անահիտի ամուսնութեան ոսկի տարեդարձը:

Միքելի Չոհրապ, գիտեմ թէ Մելգոնեանը որքան մօտ է սիրտիդ եւ զգացումներուդ: Այն օրէն ի վեր երբ Մելգոնեանի գոցուիլը տխուր իրականութիւն դարձաւ, խումբ մը նուիրեալ Մելգոնեանցիներու հետ միասին, յառաջապահ դիրքերու վրայ անդու պայքարի անցար Մելգոնեանը փրկելու համար: Եւ այդ է պատճառը որ մենք այսօր քիչ մը աւելի յուսադրուած ենք, քիչ մը աւելի լաւատես ենք Մելգոնեանի ապագային նկատմամբ:

Եւ եթէ պատահի որ Մելգոնեանը օր մը դարձեալ վերաբացուի (եւ բոլորս ալ կ'աղօթենք ու սրտանց կը մաղթենք որ այդ օրը շուտ ըլլայ), Մելգոնեանցիներ աշխարհով մէկ երախտագիտական զգացումներով շնորհապարտ պիտի ըլլան քեզի, քու անխոնջ ու հարատեւ աշխատանքիդ համար: Մեզի այժմ կը մնայ, սրտանց քաջառողջութիւն եւ երկար կեանք մաղթել քեզի, որպէսզի տեսնես քու միակ փայփայած երազիդ իրականացումը.....:

NEVER GIVE UP ON A DREAM!

ԿԱՐՕ ԳԱՍԱՊԵԱՆ

Յուլիս 9, 2011